

# ԱՀԱՍԱՐՄՈՒՌ ՊԱՏԵՐԱԶՄԸ



Արցախում (հայտնի է նաև որպես Լեռնային Ղարաբաղ) ընթացող պատերազմը միջազգային երկու հայեցակետ ունի՝ աշխարհաքաղաքական և իրավական: Այս երկու հայեցակետն էլ շատ կարևոր են: Եվ սխալ է հակամարտության իրավական կողմն անտեսելը:

Միջազգային իրավունքի տեսանկյունից Արցախում պատերազմը մեկ անգամ ևս ընդգծում է երկու մրցակցող սկզբունքների՝ **ազգերի ինքնորոշման իրավունքի** և **պետությունների տարածքային ամբողջականության** միջև հակադրությունը:

**Արդյո՞ք ազգերի ինքնորոշման իրավունքն ավելի կարևոր է, քան պետությունների տարածքային ամբողջականության սկզբունքը:** Արցախյան հակամարտության պարագայում միջազգային իրավունքի տեսանկյունից սա է ամենակարևոր հարցադրումը:

Ուսումնասիրելով բազմաթիվ փաստաթղթեր և գրուցելով մի շարք փորձագետների հետ՝ մենք որոշեցինք ձեզ ներկայացնել մի քանի մտքեր, որոնք կարող են օգտակար լինել խնդրով հետաքրքրվողների, ինչպես նաև այս սարսափելի պատերազմի հետևանքները կրող բազմաթիվ մարդկանց համար:

*Տարածքային ամբողջականության* սկզբունքը միջազգային իրավական համակարգի շատ կարևոր բաղադրիչ է: Այն արգելում է ուժի գործադրմամբ տարածքային ձեռքբերումները: Այս սկզբունքը դատապարտում է երկրի ազգային միասնության և տարածքային ամբողջականության մասնակի կամ ամբողջական խախտումը:

Այդուհանդերձ, այս սկզբունքն էլ անբեկանելի չէ: Մի շարք երկրներ, օրինակ՝ Հարավսլավիան, Չեխոսլովակիան, ԽՍՀՄ-ը, մասնատվել են և ճանաչվել նոր՝ միջազգայնորեն ընդունելի սահմաններով:

Ավելին, *տարածքային ամբողջականության* սկզբունքը հաճախ մրցակցության մեջ է միջազգային իրավունքի մեկ այլ՝ «ազգերի» ինքնորոշման իրավունքի հետ:

**Արդարադատության միջազգային դատարանն** ինքնորոշման սկզբունքը սահմանել է որպես *ժողովուրդների ազատ կամարտահայտությունը հաշվի առնելու անհրաժեշտություն*: Ազգերի ինքնորոշման իրավունքն ամրագրված է Միավորված ազգերի կազմակերպության (ՄԱԿ) կանոնադրության մեջ, ինչպես նաև բազմաթիվ այլ միջազգային հռչակագրերում, կոնվենցիաներում և Գլխավոր ասամբլեայի բանաձևերում:

Այդուհանդերձ, բազմաթիվ մեծ երկրներ, որոնք քաղաքական լուրջ ազդեցություն ունեն ՄԱԿ-ի շրջանակներում, չեն ցանկանում ինքնորոշման իրավունքը ճանաչել որպես *բացարձակ* իրավունք: Հետևաբար, միջազգային իրավունքը ազգերին մեխանիկորեն չի շնորհում արդեն իսկ անկախ պետությունից անջատվելու իրավունք: Բարեկամական հարաբերությունների մասին ՄԱԿ-ի հռչակագրերից մեկում ամրագրված է, որ ինքնորոշման իրավունքը չի խրախուսում կամ չի տալիս իրավունք մասնատելու պետության տարածքային կամ քաղաքական ամբողջականությունը, եթե տվյալ պետությունը պահպանում է ազգերի իրավունքների հավասարության և ինքնորոշման սկզբունքները:

**Թարգմանություն.**  
Բևորինակը  
անգլերենով է



**FUTURES STUDIO**

Think to connect!

Հայտնի դարձած մի դատական գործում<sup>1</sup>, որն իր հատուկ տեղն է գտել միջազգային իրավունքի պրակտիկայում, Կանադայի Գերագույն դատարանը (աշխարհի ամենահիրավասու և անկախ գերագույն դատարաններից մեկը) հայտարարել է, որ «անջատման իրավունքը կարող է ծագել միայն ազգերի ինքնորոշման սկզբունքի շրջանակներում, երբ «ազգը» օտարի հալածանքների, գերիշխանության կամ շահագործման առարկա է: Դա հնարավոր է նաև այն դեպքում, երբ «ազգին» մերժվում է իր ինքնորոշման իրավունքի որևէ իմաստալից կիրառում այն պետության կողմից, որի մաս է կազմում»:

### **Արցախի (Լեռնային Ղարաբաղ) եթնիկ հայերի շուրջ ստեղծված իրավիճակի պարագայում երեք հիմնական հարցեր կան.**

1. Ադրբեջանի կառավարությունը հայ փոքրամասնության հանդեպ մշտապես վարել է մշակութային ուժացման և խտրականության քաղաքականություն: Ադրբեջանի կառավարությունը մշտապես փորձել է վարել ագրեսիվ պետական քաղաքականություն, որի արդյունքում հայկական մեծամասնությունը (70%-ից ավելի) կդառնար փոքրամասնություն:
2. Ադրբեջանի կառավարությունն աշխարհի ամենակոռումպացված և բռնապետական կառավարություններից մեկն է՝ լիովին անգործունակ իրավական համակարգով: Սա շատ հեշտ է ապացուցել: 2017 թվականին Ադրբեջանի նախագահը սահմանադրական փոփոխություններ կատարեց միայն նրա համար, որ իր կնոջը նշանակեր երկրի փոխնախագահ՝ դարձնելով երկրում երկրորդը լիազորություններով (Գլոբալ իրավական ազդարարի (Global Legal Monitor) հոդվածը տե՛ս [այստեղ](#)):
3. Ադրբեջանի կառավարությունն այժմ հանցավոր համաձայնության մեջ է Թուրքիայի կառավարության հետ, իսկ 1915 թվականի Հայոց ցեղասպանությունը (Թուրքիայի կողմից) հայտնի պատմական փաստ է: Վերջին շաբաթների ընթացքում Ադրբեջանի և Թուրքիայի կառավարությունները հայերի դեմ կոմպլեյն նպատակով հազարավոր ԻԼԻՊ-ի գրոհայիններ են Սիրիայից տեղափոխել Արցախ: Ռուսաստանի, Ֆրանսիայի, ԱՄՆ-ի և բազմաթիվ այլ պետությունների կառավարությունները դատապարտել են այս երևույթը և արտահայտել իրենց մտահոգությունները: Սա նշանակում է, որ Ադրբեջանը հանցավոր համաձայնության մեջ է ոչ միայն Թուրքիայի, այլև ահաբեկիչների հետ (այսպես ասած՝ «ménage à trois»):

**Հարց է առաջանում, Արցախի եթնիկ հայերն այսքանից հետո ինչպե՞ս կարող են որևէ հարցի շուրջ բանակցել Ադրբեջանի կառավարության հետ:** Արդարադատության միջազգային դատարանն աներկբայորեն հաշվի է առնելու այս բոլոր փաստերը:

Հայաստանի գործող կառավարությունը երկրի ներպետական իրավական համակարգում նշանակալի առաջընթաց է արձանագրել ժողովրդավարության և օրենքի գերակայության ամրապնդման առումով: Ուստի, Հայաստանը չպետք է վախենա աշխարհին ներկայանալ որպես պետություն, որը գործում է օրենքի գերակայության սկզբունքի հիման վրա և հակված է հակամարտությունների խաղաղ կարգավորմանը:

Հանրային միջազգային իրավական վեճերը քննող հիմնական ատյանը Արդարադատության միջազգային դատարանն է, որը հայտնի է նաև որպես Համաշխարհային դատարան:

Ո՛չ Հայաստանը, ո՛չ Ադրբեջանը մինչ օրս վերջանականորեն չեն ճանաչել Արդարադատության միջազգային դատարանի իրավագործությունը՝ որպես պարտադիր: Բայց դա չի խոչընդոտում երկու պետություններին կոնկրետ գործերով դիմել Դատարան:

<sup>1</sup> Reference re Secession of Quebec, [1998] 2 SCR 217

## Եզրակացություն

Միջազգային իրավունքի մեջ «պետությունների տարածքային ամբողջականության» (անվանենք՝ **ՊՏԱ**) հասկացությունը, որն Ադրբեջանը մշտապես հնչեցնում է, ներմուծվել է պաշտպանելու համար մի պետությունը մեկ այլ պետության ագրեսիայից (բռնակցումից, տարածքային պատերազմներից, ուժի գործադրմամբ միջամտություններից և այլն): Այլ կերպ ասած, դրա հիմնական նպատակն ու թիրախը ոչ թե «ներքին», այլ «արտաքին» է:

Սակայն **ՊՏԱ** սկզբունքը որևէ կերպ չի վերաբերում պետության **կազմում** ապրող ժողովուրդներին: Սա նշանակում է, որ որևէ երկիր երբևէ չի կարող **ՊՏԱ** սկզբունքը կիրառել սեփական բնակչության մի մասի հանդեպ՝ անկախ այդ բնակչության փոքրամասնության կարգավիճակ ունենալուց, դավանած կրոնից կամ այլ հանգամանքներից:

Այս ամենը փաստում է, որ «անկախության միակողմանի հռչակումը» կամ «ազգերի ինքնորոշման իրավունքը» տվյալ պետության կազմում ապրող մարդկանց կողմից չի հակադրվում **ՊՏԱ սկզբունքին**:

**Արցախի պարագայում հիմնական փաստարկը պետք է լինի հետևյալը՝** եթե մենք խոսում ենք կոռումպացված, բռնապետական և շահագործող պետությունների մասին, որոնք հանցավոր համագործակցության մեջ են ահաբեկիչների հետ, ապա «անկախության միակողմանի հռչակման» իրավունքը պետք է գերակալի տարածքային ամբողջականության սկզբունքի նկատմամբ:

Միջազգային իրավական համակարգը կարող էր Արցախի օրինակը օգտագործել որպես նախադեպ՝ ցույց տալու, որ կոռումպացված, շահագործող և բռնապետական պետությունների պարագայում «ազգերի ինքնորոշման իրավունքը» դառնում է գերակա:

Եթե պետությունները ցանկանում են անձեռնմխելի մնալ, ապա չպետք է լինեն կոռումպացված, շահագործող և բռնապետական: Գուցե նման պետությունների համարլավագույն լուծումը մասնատումն է ավելի փոքր իրավական պետությունների: Այդպիսով դրանք կդառնան շատ ավելի ապահով ու անվտանգ միավորներ:

Եթե գոյություն ունի որևէ վկայություն մարդու իրավունքների խախտումների, խտրականության դրսևորումների կամ էթնիկ գտումների իրականացման վերաբերյալ, ապա բոլոր միջազգային կազմակերպությունների բարոյական պարտքը պետք է լինի աջակցել փոքրամասնություն կազմող ժողովրդի՝ բռնապետությունից անկախանալու և բնաջնջումից խուսափել ձգտմանը:

Հայերը պետք է տեր լինեն Արցախի անկախությանը երկու՝ միջազգային իրավունքի և աշխարհաքաղաքական ճակատներում:

Լավագույն մադթանքներով՝

*Դավիթ Թավադյան, CFA*

*Հիմնադիր գործընկեր*

## Դրույթներ և պայմաններ

### © «Հայաստան 2041» Բարեգործական Հիմնադրամ

Բոլոր իրավունքները պաշտպանված են

«Հայաստան 2041» Բարեգործական Հիմնադրամը («Հիմնադրամ») հաշվետվության նկատմամբ ունի բացառիկ իրավունքներ:

Դուք չեք կարող փոփոխել, խմբագրել, պատճենել, վերարտադրել, հրապարակել, ստեղծել զեկույցի ածանցյալ աշխատանքներ: Ցանկացած չարտոնված վերարտադրություն կամ նյութի այլ օգտագործում կհամարվի Հիմնադրամի մտավոր սեփականության իրավունքի խախտում: Իր իրավունքների ոտնահարման դեմ Հիմնադրամը կարող է դիմել իրավական պաշտպանության միջոցների:

Հիմնադրամը պատասխանատվություն չի կրում սույն զեկույցում պարունակվող տեղեկատվության ճշգրտության կամ ամբողջականության համար: Չեկույցը գործում է միայն զեկույցում նշված ամսաթվի դրությամբ:

Չեկույցը տրամադրվում է տեղեկատվական նպատակներով և չի պարունակում խորհրդատվություն որևէ հարցի վերաբերյալ: Հիմնադրամը չի երաշխավորում զեկույցում պարունակվող տեղեկատվության/վերլուծության ճշգրտությունը: Հիմնադրամը պատասխանատվություն չի կրում սույն զեկույցում գրված և/կամ սույն զեկույցում պարունակվող ցանկացած տեղեկություն/վերլուծություն օգտագործելու համար, և/կամ զեկույցում առկա ցանկացած սխալների կամ բացթողումների կամ անճշտությունների համար, ինչպես նաև զեկույցի հիման վրա իրականացված կամ չիրականացված գործողությունների համար: Դուք օգտագործում եք սույն զեկույցը ձեր իսկ սեփական ռիսկի ներքո:

Հիմնադրամի կայքից զեկույցը բացելիս կամ ներբեռնելիս, Հիմնադրամը չի երաշխավորում, որ ձեր համակարգիչը պաշտպանված կլինի համակարգչային վիրուսներից կամ վնասակար այլ ծրագրերից: